

Վ. Ոսկանյանի «Շշուկների մատյանից» մինչև բարձրաձայնում

Եվրոպայում ճանաչում ստացած և համաշխարհային գրականության վերջին ժամանակների նշանակալից ստեղծագործություններից է Վ. Ոսկանյանի «Շշուկների մատյանը» վեպը, որը, թեև հայ գրականության իրողությունն չէ, բայց իր հերթին կարևոր բաց է լրացնում նաև հայ ընթերցողի համար. ի դեմս այդ վեպի՝ այսօր Սփյուռքի ևս մեկ գաղթօջախի կյանքը ներկայացնող ստեղծագործություն ունենք, եթե չխոսենք հայ ընթերցողին համաշխարհային վեպի արդի միտումների հետ ծանոթացնելու կարևորության մասին: «Շշուկների մատյան»-ը սկսվում է որպես հեղինակի՝ Ռումինիայի Ֆոկշան քաղաքի փոքրիկ թաղամասի կարճ փողոցում անցկացրած մանկության մասին կենսագրական պատումով: Փողոց, ուր «գրեթե ոչինչ չէր պատահում»¹: Առանցքային փոխաբերությունը լուսանկարն է, իսկ սա արդեն իսկ խոսում է վավերականության հանդեպ գրողի նախասիրության մասին: «Շշուկների մատյանում,- ինչպես հեղինակն է խոստովանում,- երևակայական գործող անձինք չկան, քանի որ բոլորն այս աշխարհում գոյություն ունեցան՝ իրենց տեղով, ժամանակով և անունով»(309): Վեպում կան միայն, ինչպես հեղինակն ինքն է ասում, «իրական կամ կրկնվելով իրական դարձած պատմություններ»(182):

Որպես իրողություն՝ բոլոր պատմությունների առանցքը Ցեղասպանությունն է, որպես կերպար՝ բոլոր հերոսներն այս կամ այն կերպ առնչվում են հեղինակի մեծ հոր՝ Կարապետ Ոսկանյանի հետ: Ահա թե ինչու վիպագիրն իրեն անվանում է նրա պատմիչը. «Այսպես դարձա Կարապետ մեծ հորս աստիճան առ աստիճան կյանքի

¹ Վարուժան Ոսկանյան, Շշուկների մատյան, Եր., Անտարես, 2014, էջ 8: Վեպից արված հետագա մեջբերումները կնշվեն փակագծերում:

պատմիչը»(41): Եվ ընդհանրապես, Վարուժան Ոսկանյանն իրեն պատմիչ է համարում՝ անընդհատ շեշտելով վավերական պատումի առավելությունը երևակայության հանդեպ: Այնուամենայնիվ, «Շշուկների մատյանը ոչ թե պատմության դասագիրք է, այլ՝ խղճի վիճակների գիրք»(289), վավերական նյութի գեղարվեստական մատուցում:

Քսաներորդ դարի կարևոր խորհրդանիշներից մեկը՝ լուսանկարը, որպես անհերքելի վկայություն բովանդակող փաստաթուղթ, վավերականության մետաֆորն է հենց, ահա թե ինչու, վավերականության միտված գեղարվեստական ստեղծագործության համար այն անփոխարինելի փոխաբերություն է: Վեպում կա լուսանկարչի կերպար՝ Արշակ Մվաճյան, լուսանկարներով մարդկանց ապագան գուշակող կույր Մինասի կերպարը, և կերպարներից շատերի կենսագրությունն էլ սկսվում է նրանց լուսանկարից: Հեղինակը գրում է «մանկության տարիների հայերի մասին», իսկ «մանկության տարիների հայերն» «ապրում էին ավելի շատ լուսանկարների, քան մարդկանց մեջ» (157): «Շշուկների մատյանում լուսանկարները հաճախ փոխարինում են մարդկանց»(156),-գրում է հեղինակը: «Շշուկների մատյան»-ը լուսանկարներում ապրող մարդկանց կենսագրությունն է, լուսանկարների ալբոմ, մեծ ու խամրած խմբային լուսանկար: Լուսանկարից է սկսվում հեղինակի հոր պապի՝ Գրիգոր Ոսկանյանի պատմությունը, Դրոյի պատմությունը, նույնիսկ Թալեաթի պատմությունը... Ահա դիպուկ մի ձևակերպում. «Պատմության սկիզբը մի լուսանկար է: Պատմության վերջը մի կարճ նախադասություն»(182): Եվ սա վերաբերում է շատ կերպարների, հատկապես այն կերպարներին, որոնք մահացել են հեղինակի ծնունդից առաջ: Անցյալը հարություն է առնում գրչով շարժման մեջ դրված լուսանկարի պես, լուսանկարը անցյալի վրա բացվող ներկան է, անցյալի խորհրդավոր պատուհանը, ընդ որում լուսանկարի մետաֆորը պատումի վավերական ոճի հետ ձևաբովանդակային հարաբերակցության մեջ է: Այսպիսով, վեպն առաջին հերթին ընտանեկան լուսանկար է: Վեպի վերջնամասում հեղինակը վերադառնում է վեպի սկզբին, այսինքն՝ իր մանկությանն

ու մանկության փողոցին, ուր արդեն մեծ իրադարձություն է տեղի ունենում՝ Կարապետ մեծ հոր հուղարկավորությունը, և ահա այսպես հայ ընտանիքի կենսագրությունը կոմպոզիցիոն շրջանակի մեջ է առնում քսաներորդ դարի գեղարվեստական տարեգրությունը՝ բեկված Յեղասպանությունը վերապրած հայերի՝ «պատմության հետ խաչաձևված» հայերի ճակատագրերում: Բազում իրադարձություններ են անցնում այս վեպով՝ առաջին համաշխարհային պատերազմ, հեղափոխություն, զանգվածային ջարդեր, ցեղասպանություն, գաղթ, խորհրդային կարգեր, աքսոր, հայրենադարձություն... Տարբեր տարեթվեր են անցնում վեպով: «Շշուկների մատյան»-ում կարևոր նշանակություն ունի 1958 թվականն իր նշանավոր բոլոր իրադարձություններով և ամենակարևոր իրադարձությամբ՝ հեղինակի ծնունդով: Սակայն վեպի առանցքային տարեթիվը 1915-ն է: «Մանկությանս Ֆոկշանում չէ, որ սկսվել է, այլ Սվազում, Դիարբեքիրում, Բիթլիսում, Ադանայում ու Կիլիկիայի շրջանում, Վանում, Տրապիզոնում, արևելյան Անատոլիայի այն բոլոր վիլայեթներում, որտեղ ծնվեցին մանկությանս տարիների հայերը և ովքեր համարվում են այս գրքի հերոսները»(207): Խոստովանություն, որ հիշեցնում է բանաստեղծական մեկ այլ ձևակերպում, թե՛ «Եվ այս էլ քանի սերունդ / ծնվում և մահանում է / 1915-ին»²: Այս անկեղծ հավատն է, որ դառնում է ներշնչանք, տպավորություն ստեղծում, թե վեպում նկարագրված իրադարձությունները՝ ջարդեր, հայ մտավորականների սպանություններ, գաղթ, «Նեմեսիս»-ի գործողություններն ու դատավարությունները, թեև հաճախ փաստագրության ոճով, բայց ականատեսի աչքերով են նկարագրված՝ Յեղասպանությունը չտեսած Յեղասպանության ականատեսի աչքերով: Իբրև ականատեսի վկայություն՝ պատմվում է ջարդերից մազապուրծ, փախստականների նավի վրա ահուսարսափի մեջ հոգին ավանդած Բաղդասար Թերզյանի մասին, ում դիակը նետում են ծովը. «Այսպես եղավ, որ Սև ծովը մեծ մորս հոր՝ Բաղդասար Թերզյանի տարուբերվող շիրիմը դարձավ»(11): Ահա

² Աշոտ Գաբրիելյան, Գրպանի բանաստեղծություններ, Ե., Անտարես, 2012, էջ 18:

պապի քույրը՝ Մաքրուհին, որ մեռնում է ջարդերի ընթացքում, մյուս քույրը՝ Մարոն, ում զինվորները տանում են, իսկ նա իր անարգված պատիվը փրկելու համար ժայռերից նետվում է Եփրատի ջուրը: Ահա պապի մոր՝ Մարիամի պատմությունը, ում աչքին Ցեղասպանությունից տասնյակ տարիներ անց արյուն է անընդհատ երևում. «Մարիամ՝ մեծ հորս մայրը, որքան աչքերի կատարակտն ուժեղանում էր, այնքան ավելի շատ արյուն էր տեսնում՝ այնպես, ինչպես ցանցաթաղանթի վրա դաջված էր մնացել երիտասարդության տարիներին Անատոլիայի ամբողջ երկայնքով՝ Տրապիզոնից մինչև Ադանա տեսած ջարդերից: Ուստի, երբ ծերության պատճառով մի անգամ ձեռքը կտրեց, չհասկացավ, թե իր շուրջը հոսած արյունից որն էր իրենը և որը՝ տեսիլք: Նրան գտան սառած աչքերով, կուչ եկած ու արնաքամ, բայց դեմքի հանգիստ արտահայտությամբ: Սուզվեց սեփական ցնորքների մեջ, ինչպես լողանալու ջրի: «Շատ է արյունը»,– ասաց մեծ հայրս: Դեռ 1941-ի ամառն էր, ու ինքն էլ չգիտեր, թե որքան ճիշտ էր»(200-201):

Արյունը Վարուժան Ոսկանյանի վեպում ոչ միայն գունային խորհրդանիշ է և մետաֆոր, ինչպես, ի դեպ, Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուքի «Իմ անունը Կարմիր է» վեպում, այլև փիլիսոփայական կատեգորիա. «Մեծ հայրս մատը ծակեց և արյունի կաթիլը ցույց տվեց ինձ. «Տեսնամ կրնա՞ս նույն բանը ընել»: Վախենում էի, բայց նաև ամաչում էի իմ վախից: Աչքերս բաց՝ թողեցի, որ նա ծակի, և մատս սեղմեցի, որպեսզի չցավեցնի: Այդ ժամանակ հայտնվեց իմ արյան կաթիլը: «Ես ծեր եմ, իսկ դուն երեխա ես: Բայց նայե որ արյունը նույնքան ողջ է՝ իմս և քուկդ: Աս է սերը կյանքին հանդեպ»(20): Եթե Փամուքի վեպում արյունը կրքի, զայրույթի, մոլեգնության սուբստանցն է, ըստ էության, պայմանավորված մահմեդականությամբ, ուր անհավատի արյուն հեղելը սրբազան գործ է համարվում, ապա Վարուժան Ոսկանյանի վեպում արյունը, «իմաստուն արյունն» է: «Երբեմն մեծ հայրս քաղցրացնել էր ուզում իր հուշերը և այդ պատճառով արյան մասին մի քիչ տարօրինակ էր խոսում: Արյան փիլիսոփա էր»(20),-գրում է հեղինակը: Եվ արյունը

հայի համար նույն ձևի մեջ ազգային խորհրդանիշ է նաև. «Նույն հետ արյան ազգակցություն ունենք»(256):

Այսպես, Եղեռնը տեսած ու վերապրած «մանկության օրերի ծերունիների» մասին պատմելով, հեղինակը պատմության պարունակներով իջնում է դեպի անցյալ՝ դժոխքի ստորին պարունակ կամ Դեյր Էզ-Ջորի անապատ: Հերոսները, անցնելով մահվան յոթ օղակներով, հասնում են այն օղակին, երբ մահն անգամ անգոր է դառնում նրանց հանդեպ, ահա թե ինչու նրանք հաղթահարում են մահը և, հարություն առած, բարձրանում վեր, և պատումը նորից փրկվածների հետ, փրկվածների կերպարներով անցյալից ուղղվում է ներկա: Ահա վրիժառուները՝ Նեմեսիսի երդվյալները, Թեիլերյանը և ուրիշներ, տարբեր պատմություններից հյուսված այս պատմության թերևս ամենահմայիչ կերպարը, «հակասումանյան պարտիզանական կռիվների յուրատեսակ Գավրոշ Միսակ Թողաքյանը»(218), որ «արհամարհում էր արյունը մինչև այն աստիճան, որ արհամարհում էր նաև իր սեփական արյունը»(216), և «հասկանալի է, որ արյան հանդեպ արհամարհանքը զուգորդվում էր մահացու բաների հանդեպ ձգողականությամբ»(217): Նա մի երազանք ուներ՝ սպանել Էնվերին, և քանի որ բացարձակապես զուրկ էր ինքնապահպանման բնագոյից, վրեժի աստվածուհու հովանավորությամբ իրագործում է արյան իր վրեժը և, դեռ փախուստից հետո վերադառնալով սպանության վայր, ուր դիակի շուրջ արդեն հետաքրքրասերների բազմությունն է խմբվել, կրակում է ևս մեկ անգամ, որից հետո ձերբակալությունն անխուսափելի էր... Հիրավի, Միսակ Թողաքյանի կյանքի պատմությունը անխոհեմ արարքների պատմություն է, վեպի ամենահետաքրքրական սյուժետային գիծը: «Շշուկների մատյան»-ը ոչ միայն մատյան է, ուր գրանցված են Ցեղասպանության զոհերի և Ցեղասպանությունը վերապրածների անուններ՝ յուրօրինակ Շինդլերի ցուցակ, ոչ միայն քսաներորդ դարի ամենամեծ «ողբերգության մատյանը» (հեղինակն ինքն է համեմատում իր վեպը Նարեկացու պոեմի հետ), «Շշուկների մատյան»-ը նաև այն ցուցակն է կամ մատյանը, ուր անց են կացված այն երիտթուրքերի անունները, որոնցից վրեժ պիտի լուծվեր՝ Արմեն Կարոյի ցուցակը, որ

Կարապետ Ոսկանյանի մոտ է պահված: «Եվ այդ պահին մեծ հայրս իր վերջին բառերն արտաբերեց, բայց ոչ վերջնական բաների լուրջ տեսքով, այլ շշուկով, ինչը որ, ինչպես տեսնելու ենք, ողբերգական հետևանքներ էր ունենալու. «Լմնցավ... Վերջապես լմնցավ...»: Ասել է, թե ցուցակում գրանցված վերջին երիտթուրքն էլ սպանվեց. «Եվ այսպես, ավելի քան կես դար հետո, Արմեն Կարոյի ցուցակն սպառվել էր: «Լմնցավ»,– շշուկացել էր մեծ հայրս Նեմեսիս աստվածուհուն, որ պարում էր շողշողուն աչքերով, կոճերը զանգակներով ապարանջանների մեջ սեղմված բոբիկ ոտքերով, «լմնցավ»,– շշուկացել էր, ու թերևս սրա և թըմբուկների պատճառով հնարավոր է, որ աստվածուհին լսած չլիներ»(476): Եվ «Շշուկների մատյանն» էլ փակվում է ոչ միայն այն պատճառով, որ ավարտվում է գլխավոր հերոսի՝ Կարապետ Ոսկանյանի կյանքը, այլ պատճառով, որ Արմեն Կարոյի ցուցակն է լրանում...

Վ. Ոսկանյանի «Շշուկների մատյանից» մինչև բարձրաձայնում

ԱՍՓՈՓՈՒՄ

Եվրոպայում ճանաչում ստացած վերջին ժամանակների նշանակալից ստեղծագործություններից է ռումինահայ գրող Վարուժան Ոսկանյանի «Շշուկների մատյանը» վեպը: Վեպում բոլոր պատմությունների առանցքը Ցեղասպանությունն է: Այստեղ նկարագրված իրադարձությունները՝ ջարդեր, հայ մտավորականների սպանություններ, «Նեմեսիս»-ի գործողություններն ու դատավարությունները, թեև հաճախ փաստագրության ոճով, բայց ականատեսի աչքերով են նկարագրված՝ Ցեղասպանությունը չտեսած Ցեղասպանության ականատեսի աչքերով:

Բանալի բառեր՝ ռումինահայ, Շշուկների մատյան, Վարուժան Ոսկանյան, ցեղասպանություն, լուսանկար, արյուն, վրիժառուներ:

From V. Voskanian's "Book of Whispers" up to highlights

RESUME

One of the widely recognized significant works in the recent years in Europe is the novel of Romanian writer of Armenian origin Varujan Voskanian. The axe of all stories in the novel is the Genocide. The events described here – massacres, murders of the Armenian intellectuals, actions and trials of the "Nemesis", although often in documentary style, but through the eyes of the witness are described – through the eyes of the witness of the Genocide who hasn't seen the Genocide.

Key words: Romanian Armenian, Book of Whispers, Varujan Voskanian, Genocide, photo, blood, avenger.

От "Книги шепотов" до придания огласке

РЕЗЮМЕ

Одной из значительных произведений последних времен, нашедших широкое признание в Европе, является новелла румынского писателя армянского происхождения Варужана Восканяна "Книга шепотов". Осью всех историй в новелле является Геноцид. Описанные здесь происшествия – погромы, убийство армянской интеллигенции, действия и судебные процессы "Немесис"-а, хоть иногда и в документальном стиле, но описанные глазами очевидцев – глазами очевидцев Геноцида, которого они не видели.

Ключевые слова: румын армянского происхождения, Книга шепотов, Варужан Восканян, Геноцид, фото, кровь, мститель.

